«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը «Պատմություն» առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անի Ամիրջանյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 84 հիմն. դպրոց

Երևան 2023

ԹԵՄԱ՝ Ինտեգրված ուսուցմանան անհրաժեշտությունը «Պատմություն» առարկայի դասավանդման գործընթացում

ՀԱՐՑԸ՝ Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ո՞րն է ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը, ի՞նչ արդյունքներ է այն ունենում սովորողների վրա:

Հետազոտության նպատակն է.

1. Իրականացնել հիմնահարցի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն

2. Փորձել բացահայտել, թե որքանո՞վ է կարևոր ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը «Պատմություն» առարկայի դասավանդման գործընթացում

3. Ուսումնասիրել, թե որքանով է արդյունավետ այդ արժեհամակարգի ներդրումը ուսուցման գործընթացում

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Մեծ է հանրակրթության ոլորտումտեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման դերն ու նշանակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթության ոլորտում ուղղված է աշխարհի տարբեր տարածաշրջաններում «տեղեկատվական անհավասարության» հաղթահարմանը: Նոր տեխնիկան տեխնոլոգիաները, ծրագրային հզոր ապահովումը և վեբ-ծառայությունների համատարած ծավալումը դառնում են մի ամբողջություն, ինչը մեծ հնարավորություններ է ապահովում ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում սովորելու համար: Այսօր տեղեկատվությունը դարձել է համաշխարհային տնտեսության անբաժանելի մասը, իսկ կրթությունը եղել և մնում է յուրաքանչյուր մարդու անձնական ու մասնագիտական հաջողության հիմքը:

Մեր ժամանակներում, անշուշտ, փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները. Բազային գիտելիքներից և նոր գիտելիքների մշտական ձեռքբերումից բացի ժամանակակից աշխատողը պետք է կարողանա նաև արդյունավետ կիրառել տեղեկատվական աղբյուրներն ու պաշարները: Այսօր նրանից պահանջվում է ստեղծագործական մտածողություն, որոշում ներկայացնելու և ողջ կյանքում սովորել ու կարողություն: Տեխնոլոգիաների ներդրման նպատակներն ու խնդիրներն անընդհատ փոփոխվում են:

Այսօր բազմաթիվ նոր առարկաների նմերմուծումը ուսումնական պլան իրականացվում է ինտեգրման սկզբունքով: Բնական է, որ տեխնոլոգիաների մուտքը

ուղեկցվում է նման նոր կապերի ստեղծմամբ, ամրապնդմամբ և որակական նոր մակարդակի ապահովմամբ: Նախագծերի մեթոդը, Վեբորոնումը, ուսուցման կարճատև դասընթացներն իրենց հիմքում ինտեգրված ուսումնառության ծրագրեր են: Այստեղ ոչ միայն տվյալ առարկայի դասավանդման մեջ տեխնոլոգիաների ինտեգրում է ենթադրվում, այլև տեխնոլոգիաների ներդրմամբ այլ առարկաների ավելի արդյունավետ ինտեգրում:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Դասը չի դիտվում աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել: Ավանդական դասի կառույցի շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ձանձրույթ: Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասը խթանում է հետաքրքրություն և աշխուժություն:

Խաչվող հասկացությունները՝

- ❖ Աշխարհահայացք և քննադատական մտածողություն
- ❖ Միջառարկայական կապեր և ինտեգրված դասեր

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Տեխնոլոգիա

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցումներ: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

Ինտեգրված ուսուցման վերաբերյալ դեռ իրենց ժամանակին գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներ՝ Յ. Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը:

Ինտեգրում նշանակում է մասերի միավորում ամբողջի մեջ: Կամ լատիներենից թարգմանաբար նշանակում է ամբողջի վերականգնում մասերի միավորումով, ինչը ոչ թեմասերի մեխանիկական միավորում է ենթադրում, այլ փոխազդեցություն, փոխարտահայտում, փոխադարձ դրսևորում, գիտելիքների սինթեզ: Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագյուն բնագավառներից մեկն է, որի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է: Այն ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների, համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ:

Ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկը ինտեգրված դասն է: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ՝ ապահովելով բազմակողմանի գիտելիքներ, հետաքրքիր ու բովանդակալից դարձնելով ուսումնական գործընթացը:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները, դրա առավելությունները:

Հետազոտության խնդիրներնեն

- Ուսումնասիրել ինտեգրվածուսուցման գործընթացի էությունը,

- Ուսումնական գործընթացի պլանավորումը՝ որպես ուսուցման արդյունավետության բարձրացման պայման
- Ներկայացնել ինտեգրված ուսուցման որպես ուսուցման կազմակերպման ժամանակակից ձև
- Ներկայացնել դասի կառուցվածքն ըստ տեսակների, դասի նկատմամբ ընդհանուր ժամանակակակից մանկավարժական պահանջները
- Ուսուցման գործընթացի պլանավորման ձևի ընտրությունն ըստ դասի նպատակի և խնդիրների
- Ուսումնական գործունեության կազմակերպումը և հիմնական ձևերի առնչությունը աշակերտների անհատական առանձնահատկություններին և կրթական մամակարդակին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում

Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և առարկաների «հոլիստիկ» ընկալումը: Դրանց կարևորության մասին խոսել է նաև մանկավարժության որպես գիտության հիմնադիր Յա. Ա. Կոմենսկին: Իր «Մեծդիդակտիկա» աշխատությունում նա նշում է, որ առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ ուսուցումը կատարվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վերհանել պատճառները, ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող[1]:

Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այսմոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այսպես, աշակերտի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն: Այլ կերպ ասած, ինտեգրված դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարը ձևավորվել է դեռևս 1800-ական թվականների վերջին: Ինտեգրված դասերի առաջացմանը և զարգացմանը անդրադարձ է կատարվել «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» ձեռնարկում: Այստեղ նշվում է, որ ինտեգրված դասերի հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, նրան հաջորդել են ՋոնԴյուին, Ջեյմս Բինը[2]:

Շարունակելով և զարգացնելով Հերբարտի տեսությունը՝ նրա հետևորդները սկիզբ դրեցին մի շարժման, որը մանկավարժության մտքի պատմության մեջ հայտնի է «հերբարտականների շարժում» անունով: Հերբարտն առաջինն էր, ով հանդես եկավ

---

[1]Արշակյան Ս.Ժ., Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին, Երևան 2014, էջ 293
[2]ԴավթյանՄ., ԳրիգորյանՔ., ԱրնաուդյանԱ., Զոհրաբյան., ՀովհաննիսյանԳ., ՕհանովաԻ., Կրթակարգիմշակմանևինտեգրմանմոտեցումներ (Ձեռնարկուսուցիչներիհամար), Երևան 2007, էջ 58

ուսումնական առանձին առարկաները որոշակի թեմաների շուրջ միավորելու առաջարկով, և այդ երևույթն անվանեց «գիտությունների ինտեգրում»:

1920-ական թվականներին այդ առաջադիմական շարժումը ղեկավարում էր ՋոնԴյուին: Նա գտնում էր, որ բոլոր գիտությունները սկիզբ են առնում «մեր միակ մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Միամտություն է կարծել, թե երկրագունդը կազմված է տարբեր բնույթներ ունեցող առանձին շերտերից՝ մաթեմատիկական, ֆիզիկական, պատմական և այլն: Ջոն Դյուին և նրա կողմնակիցները կրթակարգի հիմքում դնում էին աշակերտների անձնական և հասարակական հետաքրքրությունները և առաջ էին քաշում «ինտեգրված կրթակարգի»՝ այսպես կոչված, նախագծային մոտեցումը:

Հետագա տասնամյակների ընթացքում ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարներն ու մոտեցումները նոր ուղղվածություն կստանան: 1930-ական թվականներին երևան եկավ արմատական կրթակարգի շարժումը, իսկ 1940-50-ական թվականներին արդեն ձևավորվեցին պրոբլեմային ուսուցման ծրագրերը: Ուսումնական ծրագրի ինտեգրման մեկ այլ ջատագով Ջեյմս Բինը գտնում է, որ «Ուսումնական ծրագրի ինտեգրումը պարզապես տարբեր առարկաների դասերի պլանի վերադասավորում կամ մակերեսային վերափոխումներ պահանջող կազմակերպչական միջոց չէ: Այն դպրոցի գոյության նպատակի մասին խորհելու ձև է, ըստ որի՝ ուսումնական ծրագրի աղբյուրները պետք է լինեն կյանքի առաջադրած խնդիրները, հարցերն ու անհանգստացնող իրողությունները»:

1980-1990-ական թվականներին ուսումնական ծրագրերի ինտեգրման գործընթացում ձևավորվում է երեք մոտեցում՝ բազմառարկայական, միջառարկայական և անդրառարկայական: Շատ շուտով ակնհայտ դարձավ, որ աշակերտներ իարձագանքը ինտեգրված ուսումնական ծրագրերին շատ դրական է: Նրանք շատ են ոգևորվում իրենց ուսումնառությամբ, ընդ որում՝ թե՛ ուսուցիչները և թե՛ սովորողների արդեն իրենց ուշադրության կիզակետում պահում են երեք տարբեր թիրախ-նպատակներ՝ ուսուցման բովանդակություն, հասարակության մեջ շփվելու հմտությունների ձեռք բերում և հետաքրքիր գործունեություն կազմակերպելու կարողություն[3]:

Դյադյուշևա Լ. Պ. –ն իր հոդվածում նշում է, որ ինտեգրված դասը հանդիսանում է միջոց՝ հաղորդակցական հմտությունների զարգացման համար՝ օտար լեզուների դասավանդման շրջանակներում: Դպրոցի արդիականացման ընթացքում կրթության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնքու ղղվածե ն աշակերտի

[3]ԴավթյանՄ., ԳրիգորյանՔ., ԱրնաուդյանԱ., ՁոհրաբյանԼ., ՀովհաննիսյանԳ., ՕհանովաԻ., Կրթակարգիմշակմանևինտեգրմանմոտեցումներ (Ձեռնարկուսուցիչներիհամար), Երևան 2007, էջ 59

ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը:

Օտար լեզուների դասավանդման նպատակը հանդիսանում է հաղորդակցական կարողությունների ձևավորումը, ինչը զուգակցվում է սոցիալ-մշակութային գիտելիքների ձեռքբերմամբ, քանի որ անհնար է պատկերացնել հաղորդակցում առանց հաշվի առնելո ւսոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ օտար լեզվի ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տվյալ ազգի մշակույթի ուսումնասիրությունը: Օտար լեզվի դասավանդումն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է ժամանակ, քանի որ աշակերտը պետք է զարգացնի ունկնդրական, խոսակցական, ընթերցական և գրավոր մի շարք հմտություններ:[4]

Մեթոդիստներ Ի. Լ. Բիմը և Մ. Զ. Բիբոլետովան գտնում էին, որ օտար լեզվի ուսուցումը ինտեգրված համակարգում ուղղված է աշակերտների բազմակողմանի զարգացմանը, նրանց ընդհանուր կրթությանը և դաստիարակությանը (սրան հնարավոր է հասնել տարբեր առարկաների ինտեգրման միջոցով): Այս պարագայում ինտեգրված դասերը օգնում են աշակերտի մոտ ձևավորել աշխարհի մեկ ամբողջ ականպատկեր, որտեղ օտար լեզուն համարվում է հաղորդակցման, աշխարհը ճանաչելու միջոց:

Այդ նպատակի իրականացման համար ուսուցիչը ստեղծում է իրական կամ երևակայական իրավիճակներ, որտեղ խոսքի միջոցով աշակերտները հնարավորություն են ունենում զարգացնելու իրենց խոսքային հմտությունները: Օտար լեզուների դասն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առանձնացվում և կիրառում են աշխատանքային տարբեր հնարներ, քանի որ դժվար է տիրապետել լեզվին՝ չգտնվելով այդ լեզվով խոսող երկրում:

Ինտեգրված դասերը լավ է նկարագրել Երեմինա Ե. Ա.՝ գրելով, որ ինտեգրված դասերի շնորհիվ միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը[5]:

Ուսումնառության ընթացքում աշակերտների աշխատանքի արդյունավետությունը փաստում են մի շարք այլ հանգամանքներ: Աշակերտը կիսում է պատասխանատվություն ուսուցչի հետ, քանի որ ինֆորմացիայի միակ աղբյուրը այլևս ուսուցիչը չէ: Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելո ւօբյեկտների ու երևույթների միջև կապը: Դասը չի դիտվում

[4]Дядюшева Л. П.: Интегрированный урок как средство мотивации обучающихся на уроках иностранного языка, 2020, ст. 1

[5] Еремина Е.А: Интегрированный урок - одно из новшеств современной методики, 2012, с. 3

աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել: Ավանդական դասի կառույցի շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ձանձրույթ: Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասընթանում է հետաքրքրություն և աշխուժություն:

Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով: Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է: Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:

4. Ուսումանական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից:

Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից:

Որպեսզի հասկանանք ինտեգրված դասերը ինչպես են զարգացնում աշխարհայացքը կարևոր է հասկանալ՝ այն ինչ է: Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի և դերի մասին առավել ընդհանուր հայացքների համակարգ է: Այն մարդու ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների իդեալների, արժեքային կողմնորոշումների, ճանաչողության և գործունեության սկզբունքների միասնությունն է, որում արտահայտվում են բնության, հասարակության, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, աշխարհի համընդհանուր ընկալումը, մարդու կենսական դիրքորոշումները, դրսևորումներն ու գործողությունները:

Ինչպես գրում է Յու. Ամիրջանյանը մարդու (աշակերտի) աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականությունից: Աշխարհայացքի ձևավորման

մեջ մեծ դեր են կատարում աշակերտի ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հասնելու վճռականությունը, որին նպաստում են կամքի ուժն ու համառությունը: Կամքը համոզմունքների ու զգացմունքների ամբողջականության մեջ աշակերտին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների:

Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որսովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գործնականբ աղադրիչը: Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասը առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն:

Ինտեգրված ծրագրի առանձնահատկություններ են.

•զարգացնել երեխաների վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները

•կապեր հաստատել ուսումնական ծրագրի բոլոր առարկաների միջև, գործունեություններ, որոնք ապահովում են մի շարք ունակություններ դասին պատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից:

Որպեսզի հասկանանք ինտեգրված դասերը ինչպես են զարգացնում աշխարհայացքը կարևոր է հասկանալ՝ այն ինչ է:

Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի և դերի մասին առավել ընդհանուր հայացքների համակարգ է: Այն մարդու ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների իդեալների, արժեքային կողմնորոշումների, ճանաչողության և գործունեության սկզբունքների միասնությունն է, որում արտահայտվում են բնության, հասարակության, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, աշխարհի համընդհանուր ընկալումը, մարդու կենսական դիրքորոշումները, դրսևորումներն ու գործողությունները:

Ինչպես գրում է Յու. Ամիրջանյանը մարդու (աշակերտի) աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականությունից: Աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր են կատարում աշակերտի ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հասնելու վճռականությունը, որին նպաստում են կամքի ուժն ու համառությունը: Կամքը համոզմունքների ու

զգացմունքների ամբողջականության մեջ աշակերտին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների:

Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գործնական բաղադրիչը: Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասը առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն:

Մանկավարժական գրականությունը մանրամասն անդրադարձ է կատարում ինտեգրված դասերի առանձնահատկություններին և արդյունավետությանը: Ինտեգրված դասերի արդյունավետությունը ուսումնառության ընթացքում պարզելու նպատակով իրականացվել էր հետազոտություն: 2020 թ. ՀՀ մի շարք դպրոցներում իրականացվել է շուրջ 99 դասալսում, որոնցից ինտեգրված դաս առանձնացվել է 11-ում, դասալվող ուսուցիչները 40-ևն էին:

Կատարված հարցումը ուսուցիչների շրջանում տվեց հետևյալ պատասխանները՝

•Ուսուցիչների միայն 25%-ն է իրականացնում ինտեգրված ուսուցում:

•Ամենաշատ ինտեգրվող առարկաներն են՝ հայոց լեզուն կամ մայրենին, պատմությունը, գրականությունը, աշխարհագրությունը, անգլերենը և ֆիզիկան:

•Ուսուցիչների 56%-ը բախվում է խոչընդոտների՝ նախապատրաստական փուլում, 26%-ը՝ իրականացման, 9%-ը՝ ամփոփման, 9%-ը ոչ մի փուլում խոչընդոտներ չի ունենում:

•Ուսուցիչների 76%-ը ինտեգրված դասեր պլանավորելիս համագործակցում է այլ առարկաների ուսուցիչների հետ, 24%-ը՝ ոչ:

•Հարցման արդյունքում ուսուցիչները նկատեցին, որ ինտեգրված դասերի առավելությունները գերակշռում են խոչընդոտներին: Դասերը հետաքրքիր են, ավելի արդյունավետ են դարձնում նյութի ընկալումը: Մեծ մասը նաև նշեց, որ այս դասերը ավելի աշակերտակենտրոն են, ինչը խթան 0է հանդիսանում և մոտիվացնում է աշակերտներին՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում:

Անդրադառնալով ուսուցման դրդապատճառներին՝ նկատենք, որ դրանց ձևավորմանը կարելի է հասնել ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման

միջոցով՝ ուղղորդելով սովորողներին՝ օգտագործելու սեփական ստեղծագործական հնարավորությունները և ձևավորելու հետազոտական կարողությունները: Հանրակրթության կազմակերպման մեջ այդ վերաբերմունքը արտահայտվում է տարբեր բնագավառի գիտելիքների միավորումով ինտեգրացված դասընթացների ստեղծմանմեջ, ինչպես նաև տարբեր առարկաների ուսուցման ժամանակ ուսուցիչների առջև դրված ինտեգրացված դասեր կազմակերպելու պահանջով:

Հանրակրթական ուսումնական պլաններում վերջին տարիներին ներառված ինտեգրացված դասընթացներ են տարրական և հիմնական դպրոցի Մայրենիի, «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառի «Ես և շրջակա միջավայր», հիմնական դպրոցի «Բնություն: Բնական գիտություններ» ուսումնական բնագավառի «Բնագիտություն», հիմնական և ավագ դպրոցի «Ֆիզկուլտուրա և առողջ կենսագործունեություն» բնագավառի «Առողջ ապրելակերպ» և այլ դասընթացներ:

Այս կերպ աշակերտները կապ են հաստատում այլ առարկաների միջև՝ տեսնելով աշխարհի ընդհանուր պատկերը:

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 5-6-րդ դասարանների Մայրենին: Ուզում եմ ներկայացնել 5-րդ և 6-րդ դասարանների Մայրենիի դասավանդման ընթացքում ինտեգրված ուսուցման անհրաժեշտության մասին: Հանրակրթական դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների Մայրենիի դասագիրքը կազմված է հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշչի և ծրագրերի պահանջների հիման վրա և իրականացվում է միասնացման /ինտեգրման/ սկզբունքով: 5-6-րդ դասարաններում հայոց /մայրենի/ լեզվի և գրականության միասնացված /ինտեգրված/ ուսուցումը սովորողի առաջ բացում է գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ու դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ: 10-12 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ միասնացված /ինտեգրված/ ուսուցումը նախատեսվել է դեռահասին ծանոթացնելու և ուսուցանելու գրական ստեղծագործությունը՝ առանց գիտական բաժանումների՝ հայոց լեզու և գրականություն: Դեռահասության նախաշեմին մարդն ավելի շատ իր մասին խոսելու, իրեն տեսնելու, իր զգացածն արտահայտելու կարիք է զգում: Եվ այդ դասընթացի հիմնական նպատակադրումները աշակերտների հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների, ինքնուրույնության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է: Ուստի և արդարացվում է այս առարկայի ինտեգրված լինելը: Այ սշրջանում առարկայի անվանումն ինքը «Մայրենի» հուշում է, որլ եզվական իրողությունները պետք է ուսուցանվեն, նկատվեն, հաստատվեն խոսքային միջավայրում, բնագրերում՝ գեղարվեստական, գիտահանրամատչելի, տեղեկատվական բնույթի, որոնք դառնում են

ուսումնասիրության համար նյութեր: Բնագրի մեջ են դրսևորվում, փոխադարձկապերի և կախվածությունների մեջ են երևում լեզվական տարբեր մակարդակների միավորները, դրանց բնորոշ լեզվական քերականական առանձնահատկությունները, օրինաչափությունները: Լեզվի ուսուցման այս մոտեցումը հնարավոր է դարձնում նկատել, թե լեզվական յուրաքանչյուր միավոր ինչպես է մաս դառնում ամբողջի, մասնակցում խոսքակազմությանը, և ինչպես ամբողջը կարելի է մասնատել լեզվական համեմատաբար ծավալուն միավորներից մինչև նվազագույնը: 5-րդ դասարանի «Ուղղագրություն» բաժնի ուսուցումը կա տարվում է ընթերցանության համար նախատեսված բնագրերի միջոցով, այսինքն կենդանի խոսքի մեջ՝ բնական վիճակում: «Հնչյունաբանություն» և «Ուղղախոսություն» բաժինները ուսուցանվում են բնագրի ընթերցանությանը զուգահեռ: Միջառարկայական կապերի ստեղծումը մայրենիի դասաժամերին ունի բազմակողմանի նշանակություն: Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ: Այսպիսով, ինտեգրման հիմնական նպատակը դպրոցականի մոտ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացում ստեղծելն է, այսինքն՝ սովորողի աշխարհայացքի ձևավորումը:

Հաշվի առնելով այ նպահանջները, որ ժամանակակից կրթությունը դնում է իր առջև, ուսումնառության կազմակերպման նորարարական և արդյունավետ ձևերի որոնումը շատ արդիական է: Ինտեգրված դասերի արդիականությամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ ԿԳՄՍ-ն պլանավորում է ինտեգրված դասերի ներառում դպրոցներում:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ինտեգրված դասերը մեծ դեր ունեն նաև ամբողջական աշխարհայացքի ձևավորման գործընթացում: Անհատի ամբողջական աշխարհայացքը դիտարկում է աշխարհը, որպես մեկ ամբողջություն, ինչը հենց ինտեգրված դասերի գաղափարախոսությունն է: Անհատը սկսում է ուսումնասիրել և հասկանալ աշխարհը դպրոցական առարկաների միջոցով և գիտակցում, որ ամեն ինչ կապի մեջ է:

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և կատարելով գործնական ուսումնասիրություններ՝ մենք վերհանեցինք ինտեգրված դասերի մի շարք առավելություններ: Լինելով ուսուցման նորարարական ձև՝ այս տիպի դասերը հնարավորություն են տալիս մեկ դասի շրջանակներում միավորել տարբեր թեմաներ,

տարբեր առարկաներից և դրանք ներկայացնել աշակերտներին՝ որպես մեկ ամբողջություն:

Ինտեգրված դասերում գերակշռում է այն գաղափարը, որ աշխարհում ամեն ինչ կապի մեջ է և միասնական: Նմանատիպ դասերը հիմք են ընդունում աշակերտների կարիքները, փորձը, հետաքրքրությունները, իրենց բնույթով աշակերտակենտրոն են և նպաստում են նաև ստեղծագործական և քննական մտածողության զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արշակյան Ս.Ժ., Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին, Երևան 2014, էջ 293
2. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Ջոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցրիչների համար), Երևան, 2007, էջ 58
3. Дядюшева Л. П.: Интегрированный урок как средство мотивации обучающихся на уроках иностранного языка, 2020, ст. 1
4. Еремина Е.А: Интегрированный урок - одно из новшеств современной методики, 2012, с. 3